ԲԱՌԱԿԱՋՄՈՒԹՅՈՒՆԸ «ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՑ» ԵՐԿՈՒՄ

Հ. Մ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Միջնադարում հայ ժողովրդի քաղաքական-հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, գիտության և մշակույթի առանձին բնագավառների զարգացումը իրենց անմիջական արտացոլումն են գտնում լեզվի մեջ: Միջին հայերենի բառապաշարն ավելի է հարստանում՝ ընդգրկելով միջնադարի հայ իրականությունն արտացոլող բազում նոր բառեր, մասնավորապես գիտական կյանքին վերաբերող տարբեր տերմիններ: Այս շրջանում հայերենի բառապաշարը հարստանում է տարբեր լեզուներից, մասնավորապես արաբերենից, պարսկերենից, թուրքերենից, լատիներենից ու հունարենից կատարված փոխառություններով, որոնք արտահայտում են գիտական և հասարակական կյանքի հետ կապված հասկացություններ:

Միջին հայերենի բառապաշարի հարստացման գործում, սակայն, անուրանալի է մեր լեզվի ներքին հնարավորությունների, այն է՝ բառակազմական միջոցների դերը: Նկատելի է, որ միջին հայերենի բառակազմական հնարավորությունները գրաբարի համեմատությամբ ավելի լայն են[1]:

Միջին հայերենի բառապաշարային իրողությունները մեզ հասել են նախ և առաջ միջնադարյան գրականության միջոցով՝ ոչ միայն գեղարվեստական, այլև պատմական ու գիտական: Իսկ միջին հայերենը իր զարգացման օրինաչափություններով արտացոլում է գտել ոչ միայն ինքնուրույն, այլ նաև թարգմանական գրականության մեջ: Հայ թարգմանական գրականության մեջ այս առումով անգնահատելի սկզբնաղբյուր է «Գիրք վաստակոց» երկը, որի թարգմանությունը կատարվել է «Գեոպոնիկայի» արաբերեն տարբերակից: Այս երկը՝ իբրև երկրագործական ձեռնարկ, արժեքավոր է իր տեսակի մեջ, սակայն, ինչպես նկատում է Ղ. Հովնանյանը, այն «...ռամկական մատենագրութեան գլխավորագոյն մատեանն է, որը ոչ միայն բովանդակութեամբ, այլև լեզվագիտական կողմով պիտի գտնվի գրչագիրների հավաքածուի մեջ»[2]:

Իսկապես, «Գիրք վաստակոցը» միջին հայերենին բնորոշ մեծ թվով բառերի բացառիկ շտեմարան է, որոնցից շատերը այլ սկզբնաղբյուրով չեն ավանդված[3]:

Այստեղ վկայվում են հատկապես բուսանունների և գյուղատնտեսական տարբեր բնագավառների զգալի թվով նորակազմ բառեր:

Հայերենի զարգացման բոլոր փուլերում էլ բառակազմության հիմնական եղանակներն են բառաբարդումը և ածանցումը: Ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում բառաբարդման գործում տեսակներ են հարադրությունները, կցական և իսկական բարդությունները:

«Գիրք վաստակոց» երկում հարադրություններից ավելի հաճախական են հարադրավոր բայերը: Այստեղ հարադիրները հիմնականում գործածվում են այնել (առնել, անել) և լինել, հազվադեպ՝ ածել, արկանել, գալ, դնել, երթալ, կենալ, տալ բայերի հետ: Բայական հարադրությունների երկրորդ բաղադրիչը միշտ բայ է, իսկ առաջինը, այսինքն՝ հարադիրը, կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերով, ընդ որում այն, ըստ կազմության, կարող է լինել ինչպես պարզ, այնպես էլ ածանցավոր և բարդ:

«Գիրք վաստակոցում» ավելի շատ հարադրավոր բայեր են կազմվում գոյական+բայ կաղապարով, ինչպես՝ արմատ առնուլ (42), աքաղ առնել (216), բեր առնուլ (70), երակ

---

[1] Տե՛ս Ս. Ղ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 276:

[2] Տե՛ս Ղ. Ցովնանեան, Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, հ. Ա, Վիեննա, 1897, էջ 92:

[3] Տե՛ս Հ. Մկրտչյան, «Գիրք Վաստակոցի» հայերեն թարգմանության շուրջ, «Իրան-նամե», 1996, թ. 4-5, էջ 42:

առնուլ (219), եռ անցուցանել ի վերայ (30), ընդրողութիւն առնել (2), թէտպիր դնել (175), ի թուրջ արկանել (31), հալաս առնել (46), ճար առնել (4), մգոտ առնել (15), քաշկու առնել (130):

Ածական+բայ կաղապարով կազմվում են պարզ կամ ածանցավոր հարադրով մի քանի բարդություններ, ինչպես՝ անմիտ առնել (21), արի կենալ (62), արիական կենալ (147), արքինի առնել (19): Այս կաղապարով հիմնականում հանդիպում են իսկական բարդությամբ հարադիր ունեցող բարդություններ, որոնց հարադիրները անկախ գործածությամբ աչքի չեն ընկնում: Հանդիպում են նման կարգի հետևյալ հարադրավոր բայերը. առաջնատուր առնել (207), աստղահար լինել (149), արեւայրեաց առնել (16), արգելաշունչ լինել (219), աւելդատ առնել (83), խմորջուր առնել (174), պաղքաշ առնել (159), տակհան առնել (60), քարքաղ առնել (62):

Բայական հարադրության հարադիրը կարող է լինել նաև կախյալ բայարմատ կամ բառաձև: Այս եղանակով «Գիրք վաստակոցում» կազմվում են հալ բերել (120), պարտ առնել (13), փաթաթ անցուցանել (66), փաղ գալ (216) հարադրությունները:

«Գիրք վաստակոցում», ինչպես նաև միջին հայերենում առհասարակ, զգալի թիվ են կազմում հատկապես ի նախդրով հարադիր ունեցող բարդությունները, ինչպես՝ ի բան տանել (28), ի բաց թողուլ (68), ի բեր գալ (32), ի գործ երթալ (180), ի խայծ լինել (174), ի ծիծն կենալ (203), ի կամք գալ (202), ի պառակ դնել (54), ի վայր ածել (219), ի վայր տալ (67), ի վեր կալուլ (137), ի փաղ գալ (216):

Անվանական հարադրություններից «Գիրք վաստակոցում» լայն կիրառություն ունեն կրկնավոր բարդությունները: Վերջիններս կազմվում են տարբեր խոսքի մասերի պատկանող նույն բառի անփոփոխ կամ փոփոխված կրկնությամբ և հանդես են գալիս իբրև մեկ ամբողջական բաղադրություն: Կրկնավոր բարդությունների կազմությանը կարող են մասնակցել նաև նախդիրները, որոնցից բաղադրիչները իրար միացնելու գործում առավելապես ի-ն և ընդ-ն են աչքի ընկնում: Ըստ այդմ կրկնավորները կազմվում են հետևյալ կաղապարներով.

ա) Գոյական+գոյական՝ բակ բակ (70), դրգալ-դրգալ (165), եռ ընդ եռ (117), թափ ընդ թափն (196), ծայրէ ի ծայր (57), կէս կէս (124), կէս ի կէս (125), շող շող (186), տակ տակ(166):

բ) Ածական+ածական՝ արձակ արձակ (58), քչիկ քչիկ (184):

գ) Մակբայ+մակբայ՝ երակ երակ (142), զատ զատ (57):

դ) Դերանուն+դերանուն՝ ինք ընդ ինք (99), ինք ընդ ինքն (187):

Վերոնշյալ բոլոր կրկնավորներով էլ կազմվում են մակբայներ:

«Գիրք վաստակոց» երկում, ինչպես նաև միջին հայերենում առհասարակ, ավելի շատ բարդություններ են կազմվում համադրության սկզբունքով, այսինքն՝ բարդության բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար, ունեն մեկ ընդհանուր շեշտ: Համադրական բարդությունները ըստ կազմության լինում են իսկական և կցական: «Գիրք վաստակոցի» նորակազմ բարդություններից ամենից շատ հանդիպում են իսկական բարդությունները, որոնք կազմվում են բազմազան կաղապարներով: Հայերենին բնորոշ բառակազմական օրինաչափությունների համաձայն՝ իսկական բարդությունները կազմվում են հոդակապով կամ առանց հոդակապի: Այստեղ հոդակապի դերով հիմնականում հանդես է գալիս ա-ն, ինչպես՝ աղբահող (153), թոքացաւ (120), լաւահամ (49), կողացաւ (169), ճղապատրոյս (140), ոտնաշարժ (221), վատահոտ (16), փոթոփահամ (97) և այլն:

Բացի ա-ից, զգալի թվով բարդություններում հոդակապի դերով հանդես են գալիս ե//է ձայնավորները, որոնք հիմնականում գործում են ի-ով վերջացող բառ-բաղադրիչների դեպքում (ի+ա> ե//է), ինչպես՝ աղաւնէտուն (225), այգետեղ (59), գարէհաց (221), գինէմրուր (42), լեղեհամ (53), ճիճեկեր (154), շլնէտակ (198), փոշեթաթախ (172) և այլն:

Առանց հոդակապի սովորաբար կազմվում են այն բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչը ձայնավորասկիզբ է, ինչպես՝ ակնուտ (38), բերառք (149), գոզարգել (208), լեզուաթոռ (205), նեղակն (55), ջրընկեց (8), փողերակ (198) և այլն:

Պետք է նկատել, որ «Գիրք վաստակոցի» բառակազմության մեջ ավելի հաճախակա՝ են դառնում անհոդակապ իսկական բարդությունները, ինչպես՝ ազոխջուր (223),

բերցոյց (65), դեղդիր (164), կոյզկապ (83), հաւտուն (226), մկնսոխ (120) և այլն:

Ինչպես արդեն նշվեց, «Գիրք վաստակոց» երկում իսկական բարդություններ են կազմվում տարբեր կաղապարներով: Դրանք են.

ա) Գոյական+գոյական: Այս կաղապարով կազմվող իսկական բարդությունները մեծ մասամբ գոյականներ են, որոնց բաղադրիչները իրար նկատմամբ գտնվում են հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերության մեջ, ինչպես՝ ագէտակ (201), ականջկրկիտ (130), բալգոյն (219), բնաորթ (55), գարէալիւր (92), գշկուրմուխ (193), գինէխաղող (135), թոքտուն (220), իշքուռակ (204), կարասնագ (114), կտաբոյս (142), հացմիջուկ (226), մասարաքար (184) (I բաղադրիչը փոխառված է արաբ.< masara «ձիթաղացի քար» բառից), շնխաղող (205), չամանջուր (223), պարսմայր (131), տոշբերան (208), փոշէջուր (208), քթափողք (198) և այլն:

Այսպես կազմվում են նաև ածականներ և մակբայներ: Նման դեպքեր ավելի քիչ են հանդիպում, ինչպես՝ ափչաք (21), բորբոսահամ (110), ընկուզաչափ (163), մրգոյն (188):

բ) Ածական+գոյական կաղապարը հաջորդ գործուն կառույցն է, որով կազմվում են ածականներ, որոնք իրար նկատմամբ գտնվում են որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերության մեջ, ինչպես՝ աղէկաղբ (43), բարձրառաստաղ (3), ծանրահամ (46), կարճոստ (60), կոկկեղև (38), հաստատակոհճ (7), մանրապտուղ (49), մեծակոյզ (50), նորտունկ (66), նօսրագետին (54), շատաշուրջ (210), չարհոտ (79), վատձեթ (116), վատուժ (138), վոգքիթ (198), քարանուխ (191) և այլն:

գ) Գոյական+բայարմատ կաղապարով կազմվում են գոյականներ և ածականներ, որոնք արտահայտում են ենթակայական և հարակատար դերբայների իմաստ[1], ինչպես՝ արեւացայթ (17), այգեկիթք (40), գինեբուղխ (50), լծվար (19), կիսաեփ (133), ճիճեհար (154), մրգաբեր (74), շողակիզ (130), որդնհար (145), պտղաբեր (27), ջրխառնած (183), վզենկարար (193), քաղհան (172) և այլն:

դ) Ածական կամ մակբայ+բայարմատ: Այսպես կազմվում են ածականներ՝ ենթակայական և հարակատար դերբայների իմաստով, ինչպես՝ բազմադիմի (6), բարձրահայեաց (198), դրուցահայեաց (4), ժրարար (197), կանխածին (199), կորահար (165), յոժարագնաց (198), նործին (204), շատաբեր (132), շատբեր (138), շուտահաս (44) ցածահայեաց (222), քաջահամ (104), քաջեփ (3):

ե) Գոյական+ածական կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ, ինչպես՝ ազոխախառն (198), աղբախառն (141), անտառախիտ (170), ափկից (166), բնահաստ (150), գործելախառն (117), գօտելարձակ (161), կապծակ (83), որդնծակ (143), տերևականաչ (174):

զ) Բայարմատ+գոյական: Այս կաղապարով «Գիրք վաստակոցում» կազմված է երկու բառ, առաջինը՝ ածական, երկրորդը՝ գոյական: Դրանք են արգելաշունչ (219) և ելաստեղք (97):

է) Թվական+գոյական կաղապարով կազմված են հետևյալ ածականները՝ երեքուունի (183), երկչափ (172), միադեհ (56), չորեքկոյս (158):

ը) Դերանուն+գոյական կաղապարով հանդիպում է ընդամենը մեկ ածական՝ այլահամ (134):

թ) Դերանուն+թվական կաղապարով ևս մեկ բառ է վկայված՝ ամենամէկ (191):

ժ) Մակբայ+գոյական կաղապարով կազմված է ընդամենը մեկ գոյական՝ ներքնատակ (159):

Առանձին դեպքերում իսկական բարդությունների իմաստը կոնկրետանում է ածանցի շնորհիվ, ինչպես՝ աշխարհավանաոութիւն (14), բորբոսահոտութիւն (3), ժանկահոտութիւն (117), խանձրէհամութիւն (103), քովացաւութիւն (119) բառերում:

Նման ձևով իսկական բարդություններից բայական վերջածանցի հավելմամբ կազմվում են հետևյալ բայերը. ակնաբացել (43), այլահամել (104), զֆրաքաղել (135) (I բաղադրիչը փոխառված է արաբ. zufr «փրփուր» բառից), ծաղկաթափիլ (150), թերեհամել (104), թերիկախել (172), խանձրէհամիլ (105), խանձրէհոտիլ (117), հողցայթել (143), ջրախառնել (7), փրաթափել (136):

[1] Տե՛ս Ռ. Ս. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 181:

Ավարտելով «Գիրք վաստակոցի» իսկական բարդությունների քննությունը՝ նշենք, որ վերջիններս կազմվում են գրաբարում գործող բառակազմական օրինաչափություններ-ի համաձայն: Սակայն երբեմն նկատելի են իսկական բարդությունների կազմության այնպիսի դեպքեր, երբ առաջինի փոխարեն երկրորդ բաղադրիչն է հանդես գալիս իբրև լրացում, ինչն էլ օտար ազդեցության հետևանք է: Այս եղանակով են կազմված կապծակ (83), միջգետին (179), միջնածիլ (163), շքաչոր (100), տերևականաչ (174) բառերը:

Իսկական բարդությունների համեմատությամբ «Գիրք վաստակոցում» մեծ թիվ չեն կազմում կցական բարդությունները: Ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում կցական բարդություններն առաջ են գալիս շարահյուսական տարբեր կապակցություններ-ի սերտ միացումով: Ի տարբերություն գրաբարի՝ միջին հայերենում կցական բարդությունների մեծ մասն իր վրա կրում է բարբառային կնիք:

«Գիրք վաստակոցում» գործածվում են այնպիսի կցական բարդություններ, որոնք, կենսունակ լինելով բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում, ներթափանցել են այստեղ: Դրանք հիմնականում որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, ենթակա-ստորոգյալ շարահյուսական կապակցություններից առաջացած բարդություններ են, ինչպես՝ աղջկանմայր (164), լուսնկայ (17), պարգկայ (42), սարդիոստայն (192):

Այստեղ բավական տարածված են այնպիսի կցական բարդություններ, որոնք կազմվում են անվանական և բայական կրկնավորներով, ընդ որում դրանց մեջ կրկնավորները հանդես են գալիս անհնչյունափոխ կամ հնչյունափոխված ձևերով, ինչպես՝ աղտաղտ (162), թալթալ (9), կէսկէս (124), մազմզուտ (129), պերպեռ (57), պլպլկել (36), շրջմրջել (99), ջրջրուկ (47), քարքարուտ (62) բառերում:

Հանդիպում են նաև հարադրավոր բայերից առաջացած կցականներ, որոնք ակնհայտորեն խոսակցական-բարբառային կազմություններ են՝ միջին հայերենին բնորոշ հնչյունափոխություններով (ա-ի և ու-ի սղում), ինչպես՝ ակնբցել (35), արենքրմել (63), զֆրքաղել (136), ջրխառնել (145) և այլն:

Միջին հայերենում նկատելի է բաղհյուսական բարդությունների կցականացման միտում: «Գիրք վաստակոցում» հանդիպում են այս կարգի հետևյալ բարդությունները. աղուհաց (59), դարևփոս (58), դարուփոս (57), ելումուտ (190), կէսուկէս (56): Բաղհյուսական բարդությունների կցականացում է նկատվում նաև քանակական թվականների շրջանում, ինչպես՝ քսանուհինգ (23), քսանմի (20), քսաներկու (22):

«Գիրք վաստակոցում» հանդիպում են ածանցման եղանակով կազմված բազմաթիվ նոր բառեր, որոնք համալրում են միջին հայերենի բառապաշարը: Իբրև բառակազմության եղանակ՝ ածանցումը բնորոշ է հայերենին իր զարգացման բոլոր շրջաններում, սակայն տարբեր փուլերում այն տարբեր դրսևորումներ է ունեցել: Միջին հայերենում գործում են գրաբարի ածանցման բոլոր կանոնները, և դրանց զուգընթաց՝ ի հայտ են գալիս նոր ածանցներով կազմված բառեր: «Գիրք վաստակոցը» լիովին արտացոլում է միջին հայերենի ածանցման օրինաչափությունները: Այստեղ կարելի է հանդիպել թե՛ գրաբարյան ածանցներով և թե՛ միջին հայերենին բնորոշ ածանցներով կազմված նոր բառեր: Նկատի ունենալով գործածվող ածանցների բազմազանությունը՝ նպատակահարմար ենք գտնում դրանք բաժանել երեք խմբի.

1. Գրաբարում գործուն ածանցներ, որոնցով շարունակվում են նորանոր բառեր կազմվել: Դրանցից են՝ ան-, ապ-, -ած, -ակ, -ական, -այ, -այնի, -ենի, -իկ, -իչ, -ոտ, -ութիւն, -ուտ, -ուն:

2. Հնչյունափոխության հետևանքով առաջացած նոր ածանցներ, ինչպես՝ -է (<եայ), -ուց (<ոյց):

3. Միջին հայերենում հանդես եկած նոր ածանցներ. -ան, -անի, -աշ, - (ա)ցու, -եւան, -կեկ, -ովի, -ովին, -ու, -ուչ, -ք:

«Գիրք վաստակոցում» նախածանցներից բառակազմական գործառույթով աչքի է ընկնում միայն ան- ժխտականը: Այս նախածանցով միջին հայերենում վկայված շուրջ 370 բառերից[5] այստեղ հանդիպում են հետևյալները. անբուրդ (156), անգէջ (88), անեփ (21),

անլի (127), անծառ (174), անծուխ (133), անկուտ (157), անձիւթ (137), անճարակ (171), անյոյլ (6), անոստ (158), անսուաղեցնել (226), անփուշ (174):

«Գիրք վաստակոցում» բառակազմական գործառույթով հատկապես աչքի են ընկնում վերջածանցները: Դրանք ներկայացնենք ըստ վերոհիշյալ երեք խմբի:

1. Առաջին խմբում ընդգրկված գրաբարյան վերջածանցները շատ կենսունակ են դարձել՝ ընդգրկելով ավելի շատ թվով բառեր: Գործածության տեսակետից այստեղ ամենահաճախականը -ութիւն վերջածանցն է, որով կազմված են աղէկութիւն (11), աճոկութիւն (63), դահութիւն (207), խարբութիւն (6), ղորդութիւն (200), սնկութիւն (6), փոթոթութիւն (157), քրքրութիւն (27), օգտութիւն (16) և այլ գոյականներ:

-Ուտ վերջածանցով կազմված են հետևյալ ածականները. անծառուտ (174), բալուտ (158), ծառուտ (174), կառնուտ (175), կոկնուտ (62), խոտուտ (9), հալֆայուտ (33), հիլիոնուտ (39), շաղախուտ (21), սալուտ (62), սիզուտ (39), սպիտակուտ (69), ցախուտ (57), քարուտ (178) և այլն:

-Ած վերջածանցով կազմված են և՛ ածականներ, և՛ գոյականներ: Դրանք են՝ ապիկած (22), աղեղնած (202), աղնձած (90), խաճած (86), համրած (220), մկնսոխած (164), պանդրած (114), սարուած (35), սմբակած (178), տնկուած (36) և այլն:

-Ային ածականակերտ վերջածանցով կազմված են հետևյալ ածականները.

գիճային (8), ժժմային (49), խեճեպային (136), հովային (35), ձիւնային (63), որդնային (49), չորային (4), ջերմային (26), ցրտային (54):

«Գիրք վաստակոցում» կենսունակ են հատկապես նվազափաղաքշական վերջածանցները (-ակ, -իկ, -ուկ), որոնց բառակազմական հնարավորությունները ընդլայնված են: Դրանցով գոյականներից բացի կազմվում են նաև ածականներ, մասամբ էլ՝ մակբայներ:

-Ուկ վերջածանցով կազմված են աղտաղտուկ (158), անցուկ (156), գնդղուկ (166), թալուկ (166), խիարուկ (191), հասուկ (10), ճակնդեղուկ (218), նեղհոգուկ (166), պրճուկ (199), պլպլուկ (63), փակչրտուկ (37), փթրտուկ (59) բառերը:

-Իկ-ով կազմված են բաղարջիկ (101), բերուիկ (138), գառնադմակիկ (19), մերկիկ (84), պարպոիկ (47), վարոցիկ (184), տերևիկ (129), փոսիկ (163), քչիկ (182) բառերը:

-Ակ-ով կազմված են բարձրակ (3), գեղակ (4), ընձանակ (190), կարմրակ (170), կոնակ (48), կոճակ (192), սևակ (154) բառերը:

«Գիրք վաստակոցում» լայն կիրառություն ունեն նաև -ենի և -ի վերջածանցները՝ իբրև բուսանուն կերտող ածանցներ: -Ենի-ով կազմված են բադկենի (206), բեւեկնի (42), եղենի (178), եղջիւրենի (139), ընկուզենի (44), թթենի (138), ժողվենի (21), կեռասենի (143), կվենի (40-41), տանձենի (44), ֆստուխենի (138), իսկ -ի-ով՝ լիմոնի (42), պիծխի (58), հապալասի (158), նումայի (4) գոյականները:

Բուսանուն կերտելուց բացի, այս երկու վերջածանցները ունեն այլ իմաստներ: -Ենի-ով կազմված է արքենի (15) ածականը, ինչպես նաև եղենենի (177) գոյականը: -Ի-ն ևս պահպանում է իր բազմիմաստությունը. եթե առաջին դեպքում այն կազմում էր բուսանուններ, ապա մյուս դեպքում բայի ուղիղ ձևին ավելանալով՝ գործածվում է ապառնի դերբայի նշանակությամբ, սակայն արդեն ածականացված ձևով, ինչպես՝ գովելի (2), պարսավելի (2), ցանելի (70) բառերում:

-Ոց գոյականակերտ ածանցով հանդիպում են հետևյալ կազմությունները՝ արտաքնոց (30), թնթոց (107), թրջոց (20), կթոց (84), հաստոց (28), հովոց (215), հօտոց (34), սրոց (77):

-Իչ վերջածանցը, ինչպես և գրաբարում, բառեր է կազմում բայահիմքին ավելանալով:

-Իչ-ով այստեղ կազմված են գոյականներ և ածականներ՝ դղրդեցուցիչ (200), դմբիչ (125), լայնացուցիչ (200), խառնիչ (104), խարիչ (139), կերիչ (20), սրբիչ (3), փորիչ (17), քաղհանիչ (163):

---

[5] Տե՛ս Ռ. Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 195:

-Այ վերջածանցը իր տարածված կիրառությամբ կազմում է գոյականներ՝ աղուրայ (61), գչխայ (138), ծիթնայ (130), հինայ (139), սարբինայ (156), սիլայ (87):

-Ական վերջածանցով կազմվում են հետևյալ ածականները. երեսնական (118), հալողական (124), մարսական (160), փորձական (96):

Մյուս վերջածանցները «Գիրք վաստակոցի» բառակազմության պլանում սակավ կենսունակ են. յուրաքանչյուրով կազմվում է մի քանի բառ: Դրանք են.

- (ա)բար, անյոլլաբար (2), համաոստաբար (1)
- (ա)որ//ուոր//վոր, կարեցուոր (9), հեծելաւոր (200)
- (ա)պէս, մարգարտապէս (13)
-եայ, ապիկեայ (137), արճըճեայ (52)
-ին, աղբին (111), տուրտին (16)
-ուհի, արմուհի (197), դեժպուհի (221)
-ուն, գնայուն (84), եփուն (21)
-օրէն, անձրևօրէն (163):

2. Ինչպես արդեն նշել ենք, միջին հայերենում գրաբարյան որոշ ածանցներ ենթարկվում են հնչյունափոխության: Այդ ածանցներից «Գիրք վաստակոցում» նոր բառերի կազմության գործում կենսունակ են -Է (<եայ) ածականակերտը և -ուց (<ոյց)-ը, որը մի դեպքում կազմում է գոյական, մյուս դեպքում՝ մակբայ: -Է -ով այստեղ կազմված են գարէ (75), ձարէ (93), պսակէ (197), վարդէ (203), տախտակէ (52), իսկ -ուց -ով՝ այտուց (163), անօթուց (119) բառերը:

3. «Գիրք վաստակոց» երկում աչքի են ընկնում նաև միջին հայերենին բնորոշ վերջածանցներով (-ան, -անի, -աշ, -եան, - (ա)ցու, -ին, -կէկ, -վ, -ովին, -ու, -ուք, -ք և այլն) կազմությունները, որոնք մեծ մասամբ առաջացել են հին հայերենի հոլովական կամ բայական ձևերից: Պետք է նկատել, որ այդ վերջածանցներով կազմված բառերը այստեղ մեծ թիվ չեն կազմում, սակայն կարևորվում են հենց նրանով, որ արձանագրում են տվյալ ածանցի բառակազմական հնարավորությունը:

Դրանցից -ան, -անի և -ք վերջածանցները գրաբարում եղել են հոգնակիակերտ մասնիկներ, որոնք միջին հայերենում արդեն սկսել են վերածվել ածանցների:

-Ան-ով կազմվում են ածականներ: Դրանք են՝ խրչան (198), կարկաչան (189), մայրան (38), շալական (204), վազան (199):

-Անի-ով գործածվում են անձրևանի (60), բաղարջանի (132), ծրարանի (165), կարասանի (45), կցխանի (135), մրգանի (135), պատրուսանի (138), ջաղացանի (183), քթեթանի (194), քթոցանի (184) բառերը:

-Ք ածանցով գործածվում են արևմարք (116), արևցայթք (17), երեսք (19), խաչք (70), ծածք (89), կումք (133), շնհարք (221), շնորհք (175) բառերը:

-Ի և -ք ածանցների բաղադրմամբ կազմված -իք վերջածանցով հանդիպում է միայն շողիք (211) բառը:

-Անք վերջածանցը, որը առաջ է եկել գրաբարի եզակի թվի սեռականի (ան) և ք-ի բաղադրմամբ, հանդիպում է հնտանք (152), աղալանք (167), տրօսանք (87) բառերում:

Գրաբարի եզակի թվի սեռականի -ու հոլովաձևի քարացումից առաջացած -ու վերջածանցով այստեղ կազմված են խորու (15), տանու (69), քաղցու (99)բառերը:

-Ու ածանցը ևս բաղադրվում է որոշ ածանցների հետ (-ած, -աց, -ք)՝ կազմելով նոր ածանցներ: Այսպես՝ -ացու վերջածանցով կազմվել են պիտացու (1), պատրուսացու (138), տնկացու (51), սպասցու (60), իսկ -ուք -ով՝այրուք (8), կտրուք (33), սղոցուք (41), տորոսուք (19) բառերը:

-Կէկ (-կակ, -կիկ, -կուկ) միջինհայերենյան վերջածանցը, որը ևս ծագել է բաղադրմամբ (ուկ+ակ, իկ+ակ, իկ+յակ), մեծ մասամբ կազմում է բարբառային կազմություններ, ինչպես՝ կամկէկ (184), համկէք (54), սպրկիկ (57):

Եզակի թվի գործիականի -ով հոլովաձևի քարացումից ծագած -ով վերջածանցով կազմվել է ընտրով բառը, իսկ-ովին -ով՝ տակովին (33) բառը:

-Ունք վերջածանցը, որը առաջ է եկել գրաբարի հոգնակի թվի ուղղականի -ունք վերջավորության քարացումից, հանդիպում է խոշոփունք (74) բառում:

-Իճ վերջածանցով կազմվել են լվիճ (27), տակոիճ (21) բառերը, -աշ-ով՝ միայն մատղաշ (204), իսկ -ուչ -ով՝ փչուչ (82) բառը:

-Եւան ածականակերտ ածանցը, որ գործածվում է սահմանափակ թվով բառերում, այստեղ հանդիպում է գոյնեւան (204) բառում:

-Ոն գոյականակերտ ածանցով կազմված է հորոն (30) բառը:

Ավարտելով «Գիրք վաստակոց» երկի բառակազմության քննությունը՝ նշենք, որ այս երկը հարուստ է բառաբարդմամբ և ածանցմամբ կազմված բազմաթիվ նոր բառերով, որոնք կազմում են միջին հայերենի բառապաշարի անքակտելի մասը:

А. М. ТАДЕВОСЯН - ***Словообразование в произведении "Гирк вастакоц"*** . - Произведение "Гирк вастакоц" ("Геопоника") является одним из образцов средневековой армянской переводной литературы, который служит источником для исследования среднеармянского языка. Здесь встречаются слова, которые образуются почти всеми словообразовательными средствами армянского языка. В статье исследуются, в частности, слова, образующиеся способами словосложнения и аффиксации.